




ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԲԻԶՆԵՍԻ ՀԻՄՆԱԳՐԱՄ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՓՄՁ ՈԼՈՐՏԻ ԱԿՆԿԱՆԻՔՆԵՐԸ



ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԲԻԶՆԵՍԻ ՀԻՄՆԱԳՐԱՄ

Փոքր եւ միջին ձեռներեցության մասնակցությունը
խորհրդարանական ընտրություններին.
գնահատականներ և սպասելիքներ

ԵՐԵՎԱՆ - 2007

**ՓՄՁ մասնակցությունը խորհրդարանական
ընտրություններին.**

գնահատականներ և սպասելիքներ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանը որպես անցումային շրջան վերապրող երկիր ժողովրդավարական ընտրությունների անցկացման հետ կապված որոշակի դժվարություններ ունի, որոնք պայմանավորված են ընտրական գործընթացներում քաղաքացիական հասարակության շահագրգիռ խմբերի ցածր ակտիվությամբ:

Վերջին տասնամյակի ընտրությունները համեմատաբար ազատ լինելով, չեն նպաստել ժողովրդավարության հաստատմանը: Արդյունքում, քաղաքացիները կորցրել են վստահությունը դեպի իշխանությունը, որն ի վիճակի չէ, կամ չի կամենում ազատ, արդար ու թափանցիկ ընտրությունների միջոցով ապահովել իրական քաղաքացիական ազատությունը վայելելու հասարակության իրավունքը: Իր հերթին քաղաքացիական հասարակությունը դեռևս թույլ է ընտրական գործընթացում իրեն պատկանող վերահսկողական դերը իրականացնելու համար, ուստի, ժողովրդավարական բարեփոխումների խնդիրը՝ օրակարգի հարց է: 2007-ին և 2008-ին կայանալիք խորհրդարանական ու նախագահական ընտրությունները դիտվում են որպես կայուն ժողովրդավարական համակարգի և քաղաքացիական հասարակության հետագա զարգացման հեռանկարի փորձարկում:

Միևնույն ժամանակ, ՀՀ քաղաքացիներից շատերը գիտակցում են ժողովրդավարական այնպիսի արժեքների կարևորությունը, ինչպիսիք են ընտրությունները, մարդու իրավունքներն ու ներկայացուցչության սկզբունքը, և մտահոգված են ազատ, արդար և թափանցիկ ընտրությունների կազմակերպման խնդրով: Միայն հզորացած քաղաքացիական հասարակության, քաղաքական երկխոսությանը հասարակության ակտիվ մասնակցության, ազատ ընտրական գործընթացին մասնակցության բարձր ցուցանիշների պայմաններում է կարող երկիրը շարունակել ժողովրդավարական բարեփոխումները:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան	2
ՀՀ քաղաքական դաշտում ՓՄՁ ոլորտի հիմնախնդիրների նկատմամբ ունեցած դիրքորոշումների ընդհանուր բնութագիրը ...	4
Քաղաքական ուժերի գնահատականները և ՓՄՁ ոլորտի սպասելիքները	8
Հավելված. Հարցաշարի նմուշ	19

Առկա փորձից ակնհայտ է, որ քաղաքացիական հասարակության մասնավոր և հանրային հատվածների համագործակցությունը կարգավորող քաղաքական և իրավական լուծումներից շատերը կայուն և թափանցիկ ընտրակարգի հաստատման նպատակով լուրջ կատարելագործման կարիք ունեն: Այդ առումով ակնհայտ է, որ քաղաքացիական հասարակության զգալի մասը կազմող ՓՄՁ հատվածը ունակ է կարևոր դերակատարություն ունենալ քաղաքական ենթակառույցների ձևավորման ու զարգացման և քաղաքական երկխոսության կայացման գործում:

Քաղաքական կուսակցությունների հետ ՓՄՁ հանրության արդյունավետ նախընտրական երկխոսությունը կարող է քաղաքական ուժերը դեպի ազատ, արդար ու թափանցիկ ընտրությունները կողմնորոշելու միջոց դառնալ: Ուստի, ՓՄՁ հանրությունը պետք է որոշակի պատասխանատվություն ստանձնի երկրում ժողովրդավարական արժեքների ներդրման և միջազգային չափանիշներին համապատասխան ազատ, արդար ու թափանցիկ ընտրությունների կայացման համար: Գործարար հանրությունը պետք է ներգրավված լինի ընտրական քաղաքականության ձևավորման և բուն ընտրական գործընթացի մեջ: Միաժամանակ, որպես թիրախ խումբ, գործող կողմ և շահառու հանդես եկող ՓՄՁ հանրության դերը գալիք ազատ, արդար ու թափանցիկ խորհրդարանական և նախագահական ընտրությունների կազմակերպման մեջ չպետք է թերագնահատվի:

Գործարար հանրության համախմբված և քաղաքացիական հասարակության մյուս խմբերի հետ համատեղ հանդես գալը մի կողմից կընդգծի քաղաքական կուսակցությունների շրջանում ՓՄՁ ոլորտի զարգացման կարևորությունը, խթանելով նախընտրական ծրագրերում և ռազմավարության մեջ ոլորտի շահերի պաշտպանության խնդիրների ներառմանը, իսկ մյուս կողմից, կնպաստի ՓՄՁ հանրության իրազեկության բարձրացմանը, ընտրական մշակույթի ձևավորմանը, ընտրական գործընթացներին ակտիվ մասնակցությանը, շահերի պաշտպանության կարողությունների զարգացմանն ուղղված

ժողովրդավարական ավանդույթներին համապատասխան արդար, ազատ ու թափանցիկ ընտրակարգի կայացմանը:

ՓՄՔ-Հ-ն ՓՄՁ հանրության կարողությունները գալիք ազատ, արդար ու թափանցիկ խորհրդարանական և նախագահական ընտրությունների կազմակերպման և անցկացման մեջ հզորացնելու նպատակով նախաձեռնել և իրականացրել է ուսումնասիրություն, բացահայտելու համար ՓՄՁ ոլորտի զարգացման խնդիրների վերաբերյալ տարբեր քաղաքական կուսակցությունների և միավորումների դիրքորոշումը, քաղաքական պլատֆորմը, օրենսդրական և կառուցվածքային մոտեցումները:

Ուսումնասիրության շրջանակներում ձեռք բերված նշանակալի նվաճումներից է տեղի ունեցած երկխոսության արդյունքում քաղաքական ուժերի շրջանում ձևավորված ՓՄՁ ոլորտի զարգացման խնդիրների շուրջ իրազեկման աստիճանի բարձրացումը: Դա իր հերթին հիմք կծառայի և կնպաստի հետագայում ծավալվող քննարկումներում շոշափելի արդյունքների ձեռք բերմանը և ցանկացած քաղաքացիական ակցիայի կամ հաջողված շահերի պաշտպանության նախաձեռնության իրականացման ժամանակ կընդլայնի ժողովրդավարական մեխանիզմների միջոցով ՓՄՁ ոլորտի քաղաքականության բարեփոխումների քննարկմանը շահառու հանրության մասնակցության հնարավորությունը, լսելի դարձնելով շահառուների ձայնը քաղաքական որոշումների կայացման, կառավարման մարմինների ձևավորման մեջ, գործիք կդառնա քաղաքական ուժերի արդյունավետ ու ժողովրդավարական վերաբաշխման համար:

Ուսումնասիրությունը կարող է նաև հիմք ծառայել ՓՄՁ ոլորտի ներկայացուցիչների և համապատասխան կազմակերպությունների ու քաղաքական կուսակցությունների միջև նախընտրական հաղորդակցման և փոխադարձ կապերի հաստատման, ՓՄՁ ոլորտի բարեփոխումների ուղղությամբ որոշում կայացնողների հետ շարունակական համագործակցության և ժողովրդավարական նախընտրական գործընկերության համար, որի արդյունքում կզարգանան ՓՄՁ

հանրության ու քաղաքական կուսակցությունների միջև փոխհարաբերությունները և կնպաստեն նորընտիր խորհրդարանի կողմից ՓՄՁ ոլորտի բարեփոխումների խթանմանը:

Սույն տեղեկատվական բրոշյուրը ամփոփում է ուսումնասիրության արդյունքները: Այն ներկայացնում է ՀՀ-ում գործող, մասնավորապես, ՀՀ Ազգային ժողովի ընտրություններին մասնակցող քաղաքական կուսակցությունների և միավորումների ՓՄՁ ոլորտի հետագա զարգացման վերաբերյալ դիրքորոշումների, նախընտրական ծրագրերի և դրանց իրականացման ռազմավարությունների վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն: Հրապարակման նպատակն ու խնդիրն է բարձրացնել խորհրդարանական ընտրություններին մասնակցելու մտադրություն ունեցող հայաստանյան քաղաքական կուսակցությունների իրազեկության աստիճանը ՓՄՁ ոլորտի բարեփոխումների անհրաժեշտության վերաբերյալ, խթանել նախընտրական ծրագրերում քաղաքական ուժերի անդրադարձը դեպի ՓՄՁ ոլորտի խնդիրները: Միևնույն ժամանակ, նպատակ է ավելի կարող ու համախմբված ՓՄՁ հանրության կայացմանը, որը գալիք բոլոր մակարդակների ընտրական գործընթացներում հանդես կգա ավելի նպատակաուղղված և արդյունավետ:

Բրոշյուրը բաղկացած է երկու մասից: Առաջին մասում ներկայացված է ՀՀ քաղաքական դաշտի ՓՄՁ ոլորտի հիմնախնդիրների նկատմամբ ունեցած դիրքորոշման ընդհանուր բնութագիրը: Երկրորդ մասը ներկայացնում է նույն հարցի նկատմամբ ՀՀ Ազգային ժողովի ընտրություններին մասնակցող քաղաքական կուսակցությունների ունեցած հայեցակարգային և ծրագրային մոտեցումները:

Հուսով ենք, որ մեր ուսումնասիրության արդյունքում ձևավորված և այս բրոշյուրում արտաբերված նյութը ՓՄՁ ոլորտի ներկայացուցիչների համար որոշակի տեղեկատվության աղբյուր կծառայի գալիք խորհրդարանական ընտրություններում գիտակցված և հիմնավորված ընտրություն կատարելու համար:

Մեր երախտագիտությունն ենք հայտնում Քաղաքացիական և սոցիալական զարգացման հիմնադրամին ՓՄԲՀ-ի պատվերով սույն հարցումն իրականացնելու համար:

ՀՀ քաղաքական դաշտում ՓՄՁ ոլորտի հիմնախնդիրների նկատմամբ ունեցած դիրքորոշումների ընդհանուր բնութագիրը

Այժմ, երբ երկրում չլուծված սոցիալական խնդիրներ են կուտակվել և, երբ բիզնեսն ինքը հասարակության ու իշխանության կողմից որպես գործընկեր ճանաչվելու կարիք ունի, վերջինիս սոցիալական ուղղվածություն ունեցող նախաձեռնությունները կարող են չափազանց արդիական և դրական ընկալվել, նամանավանդ, որ սոցիալական հարցումների համաձայն մեզանում դեռևս չի գոյացել գործարարության և գործարարների նկատմամբ դրականորեն տրամադրված մարդկանց ներկայացուցչական զանգվածը: Ընտրական գործընթացներում ՓՄՁ հանրության շահագրգիռ և ակտիվ մասնակցությունը թույլ կտա որոշ չափով փակել այդ բացը:

Միաժամանակ որպես թիրախ խումբ, գործող կողմ և շահառու հանդես եկող, ըստ «ՓՄՁ զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի ավելի քան 100 000 ընտրողների պատկառելի զանգված կազմող ՓՄՁ սուբյեկտների դերը գալիք ազատ, արդար ու թափանցիկ խորհրդարանական և նախագահական ընտրություններում դժվար է գերազնահատել: Այս կամ այն քաղաքական ուժի օգտին ՓՄՁ հանրության ձայնը տալը մեծապես պայմանավորված է լինելու ասպարեզում գործող քաղաքական ուժերի կողմից ՓՄՁ ոլորտի կարևորման աստիճանից, ընտրությունների արդյունքում սպասվող ոլորտի զարգացման հեռանկարից, խոստացած բարեփոխումների բնույթից:

ՓՄՁ ոլորտի զարգացման խնդիրների վերաբերյալ քաղաքական կուսակցությունների և միավորումների դիրքորոշումը, քաղաքական պլատֆորմը, հայեցակարգային և կառուցվածքային մոտեցումները պարզելու, ՓՄՁ ոլորտի փոխհարաբերությունները քաղաքական ուժերի հետ գալիք խորհրդարանական ընտրությունների ընթացքում հստակեցնելու նպատակով, Փոքր և միջին բիզնեսի հիմնադրամը նախաձեռնել և անց է կացրել ուսումնասիրություն՝ օրենքով սահմանված կարգով

գրանցված երկրում գործող 72 քաղաքական կուսակցությունների շրջանում:

Ուսումնասիրության հիմքում ընկած է եղել հատուկ մշակված հարցաշար, որի հարցերը կարելի է բաժանել երկու խմբի:

Առաջին խմբի հարցերը կազմված են եղել գնահատելու երկրում գործող քաղաքական կուսակցությունների դիրքորոշումը՝ ՓՄՁ ոլորտի զարգացման կարևորության նկատմամբ: Հարցման մասնակիցները պետք է.


1. գնահատեն ՓՄՁ ոլորտի դերը երկրի տնտեսական և սոցիալական զարգացման մեջ,
2. նշեն այն խնդիրները, որոնց լուծման մեջ առավել կարևոր դեր ունի ՓՄՁ ոլորտի զարգացումը,
3. գնահատեն կուսակցությունների անդամների շարքում ՓՄՁ հանրության ներկայացված լինելու աստիճանը,
4. վկայեն քաղաքական կուսակցությունների ծրագրային հիմնադրույթների մեջ ՓՄՁ ոլորտի զարգացման խնդրի ներառված լինելը,
5. վկայեն ՓՄՁ ոլորտի զարգացման վերաբերյալ քաղաքական կուսակցության ամբողջական հայեցակարգի կամ դիրքորոշման առկայությունը:

Հարցման ենթակա, Հայաստանում գործող 72 քաղաքական կուսակցություններից տասներկուսի հետ պետքեզհատրից ստացած տեղեկատվության միջոցով կապ հաստատել չի հաջողվել, իսկ 17-ը տարբեր պատճառաբանությամբ հրաժարվել են հարցմանը մասնակցելուց:

Մնացած 43 քաղաքական կուսակցությունների կողմից լրացված հարցաշարի հիման վրա ստացվել է հետևյալ պատկերը:


Հարցման մասնակից 43 քաղաքական կուսակցություններից 41-ը (95%) կարևորում են ՓՄՁ ոլորտի դերը երկրի տնտեսական և սոցիալական զարգացման մեջ:

Նկար 1. Կարևորում է, արդյո՞ք, կուսակցությունը ՓՄՁ ոլորտի դերը երկրի տնտեսական և սոցիալական զարգացման գործում.




Ընդ որում, 32 կուսակցություն (74%) գտնում են, որ ՓՄՁ ոլորտի զարգացումը առավել կարևոր դեր ունի նոր աշխատատեղերի ստեղծման մեջ, 28-ի կարծիքով (65%)՝ աղքատության հաղթահարման մեջ, ըստ 23-ի (53%)՝ երկրի տնտեսական աճի մեջ, իսկ ըստ 17-ի (39%)՝ տարածքային զարգացման մեջ:

Նկար 2. Կուսակցության տեսանկյունից, հատկապես, ո՞ր խնդիրների լուծման մեջ առավել կարևոր դեր ունի ՓՄՁ ոլորտի զարգացումը.




Հարցմանը մասնակցող միայն չորս կուսակցությունների անդամների թվում չկան ՓՄՁ ներկայացուցիչներ: Երկու կուսակցություն հարցն անպատասխան են թողել: Մնացած կուսակցություններից 24-ում (46 %) ՓՄՁ ներկայացուցիչները կազմում են անդամների մինչև 10 %-ը, 12-ում (28 %)՝ 10-50 %, իսկ մեկում կազմում են 50 %-ից ավելին:

Նկար 3. Կուսակցության անդամների շարքում կան, արդյո՞ք, ՓՄՁ ներկայացուցիչներ, եթե այո, ապա ի՞նչ տոկոսային հարաբերակցությամբ.




Կուսակցությունների ծրագրային հիմնադրույթների մեջ փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման խնդրի ներառված լինելու վերաբերյալ հարցի պատասխանները վկայում են, որ հարցման մասնակից 43 քաղաքական ուժերից միայն 5-ի (12 %) մոտ այդ խնդիրը ներառված չէ: 43 կուսակցություններից 38-ը (88%) ծրագրային հիմնադրույթներում այս կամ այն չափով ներառել են ՓՄՁ ոլորտի զարգացման խնդիրը:

Նկար 4. Կուսակցության ծրագրային հիմնադրույթների մեջ ներառվա՞ծ է արդյոք երկրում ՓՄՁ ոլորտի զարգացման խնդիրը.



ՓՄՁ ոլորտի զարգացման ամբողջական հայեցակարգ կամ դիրքորոշում ունեն 43 քաղաքական կուսակցություններից 31-ը (72%):

Նկար 5. Կուսակցությունն ունի՞, արդյոք, ՓՄՁ ոլորտի զարգացման ամբողջական հայեցակարգ կամ հստակ դիրքորոշում.



Առաջարկություններ կամ դիտողություններ հարցին ի պատասխան ստացվել են հետևյալ արձագանքները.

Ազգային ժողովրդավարների դաշինք

Ստեղծել աջակցության գործուն կազմավորումներ, որոնք նոր ստեղծվող ՓՄՁ-ների կտրամադրեն անհրաժեշտ տեղեկատվություն, խորհուրդներ՝ չինովնիկների ոտնձգումներից պաշտպանվելու համար:

Արցախ-Հայաստան կուսակցություն

Պետք է խուսափել ամենուրեք շինծու հարկատեսակների կիրառումից, որոնք հսկայական վնասներ են հասցնում ձեռներեցության լայնորեն արմատավորմանը, որոնց հետևանքով տնտեսապես կարող, մտավոր ունակություններով օժտված մասնագետները թողնում, հեռանում են հանրապետությունից և իրենց կարողությունները ներդնում արտասահմանում:

«Կանայք հայոց աշխարհի»

- Չինովնիկական ապարատի կրճատում:
- Չինովնիկների մակարդակի բարձրացում:
- Պատասխանատվություն կոռուպցիոն գործողությունների համար (քաշքշուկ, պաշտոնական դիրքի չարաշահում, անփութություն և այլն):

Հայաստանի առաջադիմական միացյալ կոմունիստական կուսակցություն

- ՓՄՁ գործունեությունը մեծապես կախված է խոշոր արդյունաբերական ձեռնարկությունների գործունեությունից: Քանի դեռ վերջիններս արդյունավետ չեն գործում, ՓՄՁ գործունեությունը ևս արդյունավետ չէ:
- Անհրաժեշտ է հարկային բեռի թեթևացում, որը կհանգեցնի հարկային դաշտի ընդլայնմանը:
- Անհրաժեշտ է ընդհանրել արդյունաբերական քաղաքականության ռազմավարությունը: Կուսակցությունը մշակել է ՀՀ արդյունաբերության զարգացման հայեցակարգ:

«Մեր տունը Հայաստանն է» կուսակցություն

- Պետք է ուժեղացնել պատժիչ միջոցառումները, հատկապես ոլորտի զարգացմանը խոչընդոտող, չինովնիկական ապարատի նկատմամբ:
- ՓՄՁ-ների զարգացմանը կնպաստի նաև քաղաքական համակարգի ազատականացումը, իշխանության օրենսդիր, գործադիր և դատական համակարգերի լիարժեք տարանջատումը:
- Կարևորվում է նաև պետության կողմից հակամենաշնորհային քաղաքականության իրականացումը:
- ՓՄՁ-ների համար նպաստավոր կլինի նաև տարածաշրջանային բիզնես կոուպերացիային ուղղված քայլերը:

- Պետական համակարգի միջոցով վարկային ռեսուրսների տրամադրման մեխանիզմների ներդրում՝ մասնավոր բանկային համակարգի ներգրավմամբ:

Միավորված հայեր

Անհարաժեշտ է ապահովել.

- ՓՄՁ հիմնադրման մատչելիություն ազգաբնակչության համար:
- ՓՄՁ մասին խորհրդատվական կամ աջակցության համապատասխան մարմինների ստեղծում կամ եղածների կատարելագործում, ՓՄՁ հովանավորության, դատական պաշտպանության, աջակցության ուղղությամբ:

Այսպիսով, ուսումնասիրության արդյունքներից դատելով երկրի քաղաքական ուժերը բարձր են գնահատում ՓՄՁ ոլորտի դերն ու նշանակությունը ինչպես տնտեսական, այնպես էլ սոցիալական բազում խնդիրների լուծման մեջ: Կուսակցությունների գերակշռող մեծամասնությունն ունի ՓՄՁ ոլորտի զարգացման հստակ դիրքորոշում և ձևակերպված հայեցակարգ:

Հարցաշարի երկրորդ մասը նպատակ ունի պարզել քաղաքական կուսակցությունների և միավորումների դիրքորոշումը, քաղաքական պլատֆորմը, հայեցակարգային և կառուցվածքային մոտեցումները, ինչպես նաև հիմք տալ ՓՄՁ ոլորտի ներկայացուցիչներին որոշելու և գալիք խորհրդարանական ընտրություններում դրսևորելու իրենց վերաբերմունքը դեպի այս կամ այն քաղաքական ուժը:

Քաղաքական ուժերի գնահատականները և ՓՄՁ ոլորտի սպասելիքները

Սույն թվականի մայիսի 12-ին տեղի կունենա Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ընտրությունները:

«Փոքր և միջին բիզնեսի հիմնադրամ» (ՓՄԲՀ) ոչ առևտրային ոչ կառավարական կազմակերպությունը երկրի առաջընթացի կարևոր գրավական է համարում ՓՄՁ ոլորտի կայուն զարգացումը: Այն, արդեն իսկ, դարձել է երկրի տնտեսական

դաշտի տեսանելի մասը, սոցիալական կայունության հզոր գործոնը, գործարար էթիկայի կրողը, գիտակ ու կարող մարդկանց ուժերի ներդրման ոլորտը: Հստակ գիտակցելով ՓՄՁ դերը երկրի տնտեսական ներուժի բացահայտման ու բնակչության կենսամակարդակի բարձրացման խնդիրների արդյունավետ լուծման մեջ, հենվելով մեզանում ձևավորվող սոցիալական գործընկերության ավանդույթների վրա, ՓՄԲՀ-ն իր պարտքն է համարում կոչ անել քաղաքական կուսակցություններին և ՓՄՁ ոլորտի ներկայացուցիչներին՝ համախմբվել և միավորել ջանքերը, աջակցելու համար տնտեսության հեռանկարային հատվածի կայացմանն ու զարգացմանը, մասնակցել բարենպաստ պետական քաղաքականության ձևավորմանն ու դրա իրականացման մեխանիզմների մշակմանը:

Ո՞րն է մեր՝ շարքային քաղաքացիներին անելիքը:

Գիտակցել, որ մեզանից է կախված, թե ո՞վ է որոշելու մեր կյանքի և մեր երեխաների ապագան, ու՞մ ձեռքն ենք տալու երկրի կառավարման ղեկը, ու՞մ հետ ենք ճանապարհ գնալու մոտակա հինգ տարին, ու՞մ ձայնն ենք լսելու բարձր ամբիոններից, ու՞մ ենք ներկայացնելու մեր պահանջները, ու՞մ հետ ենք կիսելու մեր մտահոգությունները, ումի՞ց ենք ակնկալելու հանրային կարիքներին ու շահին ականջալուր լինելը:

Մրանք են այն հարցերը, որոնց համապատասխան ընտրություն կատարելով մենք պիտի պատասխան տանք:

Ուստի, չլինենք անտարբեր: Ակնհայտ է, որ անկարող, կամ ապաշնորհ իշխանությունը մեր անտարբերության արգասիքն է: Եթե մենք չենք ընտրում, ապա զրկվում ենք պահանջատեր լինելու բարոյական իրավունքից և անվերջ ու ապարդյուն դժգոհ լինելու ճակատագրին ենք արժանանում:

Եթե ուզում ենք լավ ապրել, պետք է դրա համար ինքներս էլ ինչ որ բան անենք: Գուցե այժմ հենց այն պահն է, երբ կարող ենք թեկուզ փոքր ինչ, բայց ըստ մեզ փոխել երկրում գործերի ընթացքը:

Դուրս գանք մեր նեղ կաղապարից, ու մեր ճակատագրի տերը դառնալու մղմամբ պատասխանատու ու գիտակցված ընտրություն կատարենք:

Գիտակցված ընտրություն կատարելու ամենակարևոր նախապայմանը իշխանության դեկի մոտ կանգնելու հավակնություն ունեցողների ծրագրերի մասին տեղեկատվություն ունենալն է: Այն անհրաժեշտ է ունենալ, և՛ ընտրությունը կատարելու, և՛ հետագայում որոշում կայացնողների հետ փոխհարաբերությունները կառուցելու համար:

Հուսով ենք, որ սույն վերլուծությունը կծառայի որպես նման տեղեկատվության աղբյուր:

Ստորև բերված է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով գրանցված կուսակցությունների և կուսակցությունների դաշինքի ցանկը.

1. Ազգային ժողովրդավարական կուսակցություն
2. Ազգային համաձայնություն
3. Ազգային միաբանություն կուսակցություն
4. «Բարգավաճ Հայաստան» կուսակցություն
5. Դաշինք կուսակցություն
6. Ժառանգություն կուսակցություն
7. Ժողովրդական կուսակցություն
8. «Ժողովրդավարական ուղի» կուսակցություն
9. Ժողովրդական հայրենիք և Պահպանողական կուսակցություններից կազմված «Իմպիչմենտ» նախընտրական դաշինք
10. «Հայ յեղափոխական դաշնակցություն» կուսակցություն
11. Հայաստանի առաջադիմական կուսակցություն
12. Հայաստանի դեմոկրատական կուսակցություն
13. Հայաստանի երիտասարդական կուսակցություն
14. Հայաստանի ժողովրդական կուսակցություն
15. Հայաստանի կոմունիստական կուսակցություն
16. Հայաստանի հանրապետական կուսակցություն
17. Հայաստանի մարքսիստական կուսակցություն
18. Հայոց համազգային շարժում կուսակցություն
19. «Հանրապետություն» կուսակցություն
20. Միավորված աշխատանքային կուսակցություն
21. Միացյալ ազատական ազգային կուսակցություն
22. Նոր ժամանակներ կուսակցություն

23. Սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցություն

24. Զրիստոնեա-ժողովրդական վերածնունդ կուսակցություն

25. Օրինաց երկիր կուսակցություն

Ուսումնասիրության արդյունքները առավել մատչելի և համադրելի դարձնելու նպատակով ՓՄՁ ոլորտի զարգացման հեռանկարի հետ կապված կուսակցությունների դիրքորոշումները ու ծրագրերը ներկայացված են աղյուսակի տեսքով:

Աղյուսակի վերին մասում բերված են կուսակցությունների անվանումները, իսկ ձախ կողմում՝ հարցերը՝ դրանց հնարավոր պատասխանների հետ մեկտեղ:

Կուտակցության անվանումը	Ազգային ժողովրդավարական կուտակցություն	Ազգային համաձայնություն կուտակցություն	Ազգային միաբանություն կուտակցություն	«Բարգավաճ Հայաստան» կուտակցություն	Դեպի կուտակցություն
Կարևորում է արդյո՞ք կուտակցությունը ՓՄՁ ոլորտի դեբր երկրի տնտեսական և սոցիալական զարգացման գործում	Այո	Այո	Այո	Այո	Այո
Հատկապես ո՞ր խնդիրների լուծման մեջ առավել կարևոր դեր ունի ՓՄՁ ոլորտի զարգացումը					
տնտեսական աճ					
նոր աշխատատեղերի ստեղծում					
տարածքային զարգացում					
աղքատության կրճատում					
Կուտակցության անդամների շարքում կան արդյո՞ք ՓՄՁ ներկայացուցիչներ, եթե այո, ապա ի՞նչ տոկոսային հարաբերակցությամբ					
այո					
մինչև 10%					
10% - 50%,					
50%-ից ավելի					
ոչ					
տեղյակ չեմ					
Կուտակցության ծրագրային հիմնարկումների մեջ ներառվա՞ծ է արդյոք երկրում ՓՄՁ զարգացման խնդիրը	Այո	Այո	Այո	Այո	Այո
Կուտակցությունն ունի՞ արդյոք ՓՄՁ ոլորտի զարգացման ամբողջական հայեցակարգ կամ դիրքորոշում	Այո	Այո	Այո	Այո	Այո
Մտադի՞ր է կամ ներառե՞լ է արդյոք կուտակցությունը ՓՄՁ ոլորտի աջակցության խնդիրը իր նախընտրական ծրագրում	Այո	Այո	Այո	Այո	Այո
Գնահատե՞ր երկրում ՓՄՁ ոլորտի զարգացման աստիճանը	Բավարար չէ	Բավարար չէ	Բավարար չէ	Բավարար չէ	Բավարար չէ
Ինչպես կգնահատե՞ր երկրում ՓՄՁ ոլորտում բարեփոխումների անհրաժեշտությունը	Խիստ անհրաժեշտ է	Խիստ անհրաժեշտ է	Խիստ անհրաժեշտ է	Անհրաժեշտ է	Խիստ անհրաժեշտ է

Կուտակցության անվանումը	Ազգային ժողովրդավարական կուտակցություն	Ազգային համաձայնություն կուտակցություն	Ազգային միաբանություն կուտակցություն	«Բարգավաճ Հայաստան» կուտակցություն	Դեպի կուտակցություն
Կարևորում է արդյո՞ք կուտակցությունը ՓՄՁ ոլորտի դեբր երկրի տնտեսական և սոցիալական զարգացման գործում	Այո	Այո	Այո	Այո	Այո
Հատկապես ո՞ր խնդիրների լուծման մեջ առավել կարևոր դեր ունի ՓՄՁ ոլորտի զարգացումը					
տնտեսական աճ					
նոր աշխատատեղերի ստեղծում					
տարածքային զարգացում					
աղքատության կրճատում					
Կուտակցության անդամների շարքում կան արդյո՞ք ՓՄՁ ներկայացուցիչներ, եթե այո, ապա ի՞նչ տոկոսային հարաբերակցությամբ					
այո					
մինչև 10%					
10% - 50%,					
50%-ից ավելի					
ոչ					
տեղյակ չեմ					
Կուտակցության ծրագրային հիմնարկումների մեջ ներառվա՞ծ է արդյոք երկրում ՓՄՁ զարգացման խնդիրը	Այո	Այո	Այո	Այո	Այո
Կուտակցությունն ունի՞ արդյոք ՓՄՁ ոլորտի զարգացման ամբողջական հայեցակարգ կամ դիրքորոշում	Այո	Այո	Այո	Այո	Այո
Մտադի՞ր է կամ ներառե՞լ է արդյոք կուտակցությունը ՓՄՁ ոլորտի աջակցության խնդիրը իր նախընտրական ծրագրում	Այո	Այո	Այո	Այո	Այո
Գնահատե՞ր երկրում ՓՄՁ ոլորտի զարգացման աստիճանը	Բավարար չէ	Բավարար չէ	Բավարար չէ	Բավարար չէ	Բավարար չէ
Ինչպես կգնահատե՞ր երկրում ՓՄՁ ոլորտում բարեփոխումների անհրաժեշտությունը	Խիստ անհրաժեշտ է	Խիստ անհրաժեշտ է	Խիստ անհրաժեշտ է	Անհրաժեշտ է	Խիստ անհրաժեշտ է

Կուտակելու անվանումը	Հայոց համագային շարժում կուտակություն	«Հանրապետություն» կուտակություն	Միավորված աշխատանքային կուտակություն	Միացյալ ազատական ազգային կուտակություն
Կարևորում է արդյո՞ք կուտակությունը ՓՄՁ ոլորտի դերը երկրի տնտեսական և սոցիալական զարգացման գործում	Այո	Այո	Այո	
Հատկապես ո՞ր խնդիրների լուծման մեջ առավել կարևոր դեր ունի ՓՄՁ ոլորտի զարգացումը				
տնտեսական աճ				
նոր աշխատատեղերի ստեղծում				
տարածքային զարգացում				
աղքատության կրճատում				
Կուտակության անդամների շարքում կան արդյո՞ք ՓՄՁ մերկայացուցիչներ, եթե այո, ապա ի՞նչ տոկոսային հարաբերակցությամբ				
այո				
մինչև 10%				
10% - 50%				
50%-ից ավելի				
ոչ				
տեղյակ չեմ				
Կուտակության ծրագրային հիմնադրույթների մեջ ներառվա՞ծ է արդյոք երկրում ՓՄՁ զարգացման խնդիրը		Այո	Այո	
Կուտակությունն ունի՞ արդյոք ՓՄՁ ոլորտի զարգացման ամբողջական հայեցակարգ կամ դիրքորոշում	Այո	Այո	Այո	
Մտադի՞ր է կամ ներառե՞լ է արդյոք կուտակությունը ՓՄՁ ոլորտի աջակցության խնդիրը իր նախընտրական ծրագրում	Այո	Այո	Այո	
Գնահատե՞ր երկրում ՓՄՁ ոլորտի զարգացման աստիճանը	Բավարար չէ	Բավարար չէ	Բավարար չէ	
Ինչպես կգնահատե՞ր երկրում ՓՄՁ ոլորտում բարեփոխումների անհրաժեշտությունը	Խիստ անհրաժեշտ է	Խիստ անհրաժեշտ է	Անհրաժեշտ է	

1 գ ի ն ս ճ ռ ո Վ Վ 7 1 գ տ տ ո ռ ո Վ ի ո ռ Կ

Կուտակելու անվանումը	«Նոր ժամանակներ» կուտակություն	Սոցիալ-դեմոկրատ հնչական կուտակություն	Քրիստոնեա-ժողովրդական վերածնունդ կուտակություն	«Օրինաց երկիր» կուտակություն
Կարևորում է արդյո՞ք կուտակությունը ՓՄՁ ոլորտի դերը երկրի տնտեսական և սոցիալական զարգացման գործում	Այո	Այո		
Հատկապես ո՞ր խնդիրների լուծման մեջ առավել կարևոր դեր ունի ՓՄՁ ոլորտի զարգացումը				
տնտեսական աճ				
նոր աշխատատեղերի ստեղծում				
տարածքային զարգացում				
աղքատության կրճատում				
Կուտակության անդամների շարքում կան արդյո՞ք ՓՄՁ մերկայացուցիչներ, եթե այո, ապա ի՞նչ տոկոսային հարաբերակցությամբ				
այո				
մինչև 10%				
10% - 50%				
50%-ից ավելի				
ոչ				
տեղյակ չեմ				
Կուտակության ծրագրային հիմնադրույթների մեջ ներառվա՞ծ է արդյոք երկրում ՓՄՁ զարգացման խնդիրը	Այո	Այո		
Կուտակությունն ունի՞ արդյոք ՓՄՁ ոլորտի զարգացման ամբողջական հայեցակարգ կամ դիրքորոշում	Այո	Հստակեցված չէ		
Մտադի՞ր է կամ ներառե՞լ է արդյոք կուտակությունը ՓՄՁ ոլորտի աջակցության խնդիրը իր նախընտրական ծրագրում	Այո	Այո		
Գնահատե՞ր երկրում ՓՄՁ ոլորտի զարգացման աստիճանը	Բավարար չէ	Բավարար չէ		
Ինչպես կգնահատե՞ր երկրում ՓՄՁ ոլորտում բարեփոխումների անհրաժեշտությունը	Խիստ անհրաժեշտ է	Անհրաժեշտ է		

1 գ ի ն ս ճ ռ ո Վ Վ 7 1 գ տ տ ո ռ ո Վ ի ո ռ Կ

1 գ ը ո Վ լ ո ռ տ ո ռ ի Վ Շ

Կուտակային անվանումը	Ազգային ժողովրդավարական կուտակային	Ազգային համաձայնություն կուտակային	Ազգային միաբանություն կուտակային	«Բարգավաճ Հայաստան» կուտակային	Դաշինք կուտակային
ձեռնարկության հիմնադրման կարգը					
սեփականատիրական իրավունքը պաշտպանված չլինելը					
հարկային բեռը, բարդ հարկային համակարգը					
լիցենզիավորման կարգը					
կոռուպցիան պետական հատվածում					
վարկերի դժվար մատչելիությունը					
անբավարար պետական աջակցությունը					
օրենսդրության հաճախակի և անհետևողական փոփոխությունները					
դատաիրավական համակարգի անկատարությունը					
վարչարարական չարաչափումները					
Պետական աջակցության ո՞ր ուղղություններն է Չեր կուտակայինը համարում առավել կարևոր ՓՄՁ ոլորտի բարեփոխումների իրականացման տեսանկյունից					
օրենսդրական և վարչարարական բարեփոխումների իրականացում հարկային, մաքսային, ֆինանսավարկային և այլ ոլորտներում					
արդար մրցակցային դաշտի ապահովում					
կոռուպցիայի դեմ պայքար					
իննովացիոն քաղաքականության մշակում և իրականացում					
ներդրումային քաղաքականության խթանում					
տարածքային ենթակառուցվածքների զարգացում					

Կուտակային անվանումը	Ժառանգություն կուտակային	Ժողովրդական կուտակային	«Իմպլիմենտ» նախընտրական դաշինք		«Ժողովրդավարական ուղի» կուտակային
			Ժողովրդական հայրենիք կուտակային	Պահպանողական կուտակային	
Կուտակային տեսանկյունից որո՞նք են երկրում ՓՄՁ ոլորտի զարգացման հիմնական խոչընդոտները					
ձեռնարկության հիմնադրման կարգը					
սեփականատիրական իրավունքը պաշտպանված չլինելը					
հարկային բեռը, բարդ հարկային համակարգը					
լիցենզիավորման կարգը					
կոռուպցիան պետական հատվածում					
վարկերի դժվար մատչելիությունը					
անբավարար պետական աջակցությունը					
օրենսդրության հաճախակի և անհետևողական փոփոխությունները					
դատաիրավական համակարգի անկատարությունը					
վարչարարական չարաչափումները					
Պետական աջակցության ո՞ր ուղղություններն է Չեր կուտակայինը համարում առավել կարևոր ՓՄՁ ոլորտի բարեփոխումների իրականացման տեսանկյունից					
օրենսդրական և վարչարարական բարեփոխումների իրականացում հարկային, մաքսային, ֆինանսավարկային և այլ ոլորտներում					
արդար մրցակցային դաշտի ապահովում					
կոռուպցիայի դեմ պայքար					
իննովացիոն քաղաքականության մշակում և իրականացում					
ներդրումային քաղաքականության խթանում					
տարածքային ենթակառուցվածքների զարգացում					

Կուտակոթյան անվանումը	«Հայ յեղափոխական դաշնակցություն» կուտակոթյուն	Հայաստանի առաջադիմական կուտակոթյուն	Հայաստանի դեմոկրատական կուտակոթյուն	Հայաստանի երիտասարդական կուտակոթյուն
Կուտակոթյան տեսանկյունից որոշման են երկրում ՓՄՉ ոլորտի զարգացման հիմնական խոչընդոտները	վ ց ա ՚ Ե ժ մ տ հ ի ո ս Գ լ ո ս Կ Ը Մ Ի Խ Ս Դ Ը	:Անդրվածությունը բացառում է զանազան կողմերից անհամաձայնությունները:		
ձեռնարկության հիմնարկում կարգը				
սեփականատիրական իրավունքը պաշտպանված չլինելը				
հարկային բեռը, բարդ հարկային համակարգը				
լիցենզիավորման կարգը				
կոռուպցիան պետական հատվածում				
վարկերի դժվար մատչելիությունը				
անբավարար պետական աջակցությունը				
օրենսդրության հաճախակի և անհետևողական փոփոխությունները				
դատաիրավական համակարգի անկատարությունը				
վարչարարական չարաչառումները				
Պետական աջակցության ո՞ր ուղղություններն է Հեր կուտակոթյունը համարում առավել կարևոր ՓՄՉ ոլորտի բարեփոխումների իրականացման տեսանկյունից				
օրենսդրական և վարչարարական բարեփոխումների իրականացում հարկային, մաքսային, ֆինանսավարկային և այլ ոլորտներում				
արդար մրցակցային դաշտի ապահովում				
կոռուպցիայի դեմ պայքար				
իննովացիոն քաղաքականության մշակում և իրականացում				
ներդրումային քաղաքականության խթանում				
տարածքային ենթակառուցվածքների զարգացում				

Կուտակոթյան անվանումը	Հայաստանի ժողովրդական կուտակոթյուն	Հայաստանի կոմունիստական կուտակոթյուն	Հայաստանի հանրապետական կուտակոթյուն	Հայաստանի մարքսիստական կուտակոթյուն
Կուտակոթյան տեսանկյունից որոշման են երկրում ՓՄՉ ոլորտի զարգացման հիմնական խոչընդոտները			Անհամաձայնությունները:	
ձեռնարկության հիմնարկում կարգը				
սեփականատիրական իրավունքը պաշտպանված չլինելը				
հարկային բեռը, բարդ հարկային համակարգը				
լիցենզիավորման կարգը				
կոռուպցիան պետական հատվածում				
վարկերի դժվար մատչելիությունը				
անբավարար պետական աջակցությունը				
օրենսդրության հաճախակի և անհետևողական փոփոխությունները				
դատաիրավական համակարգի անկատարությունը				
վարչարարական չարաչառումները				
Պետական աջակցության ո՞ր ուղղություններն է Հեր կուտակոթյունը համարում առավել կարևոր ՓՄՉ ոլորտի բարեփոխումների իրականացման տեսանկյունից				
օրենսդրական և վարչարարական բարեփոխումների իրականացում հարկային, մաքսային, ֆինանսավարկային և այլ ոլորտներում				
արդար մրցակցային դաշտի ապահովում				
կոռուպցիայի դեմ պայքար				
իննովացիոն քաղաքականության մշակում և իրականացում				
ներդրումային քաղաքականության խթանում				
տարածքային ենթակառուցվածքների զարգացում				

Կուտակելու անվանումը	Հայոց համագլխի շարժում կուտակելու	«Հանրայինություն» կուտակելու	Միավորված աշխատանքային կուտակելու	Միացյալ ազատական ազգային կուտակելու
Կուտակելու տեսանկյունից որո՞նք են երկրում ՓՄՃ ոլորտի զարգացման հիմնական խոչընդոտները				
ձեռնարկության հիմնադրման կարգը				
սեփականատիրական իրավունքը պաշտպանված չլինելը				
հարկային բեռը, բարդ հարկային համակարգը				
լիցենզիավորման կարգը				
կոռուպցիան պետական հատվածում				
վարկերի դժվար մատչելիությունը				
անբավարար պետական աջակցությունը				
օրենսդրության հաճախակի և անհետևորակ փոփոխությունները				
դատաիրավական համակարգի անկատարությունը				
վարչարարական չարաչափումները				
Պետական աջակցության ո՞ր ուղղություններն է չեն կուտակելու համարում առավել կարևոր ՓՄՃ ոլորտի բարեփոխումների իրականացման տեսանկյունից				
օրենսդրական և վարչարարական բարեփոխումների իրականացում հարկային, մաքսային, ֆինանսավարկային և այլ ոլորտներում				
արդար ժրգակցային դաշտի սպառնալուծ				
կոռուպցիայի դեմ պայքար				
իննովացիոն բաղաբանության մշակում և իրականացում				
ներդրումային բաղաբանության խթանում				
տարածքային ենթակառուցվածքների զարգացում				

1 9 1 8 6 6 4 4 / 1 9 1 8 6 6 4 4

Կուտակելու անվանումը	«Նոր ժամանակներ» կուտակելու	Սոցիալ-դեմոկրատիկ կուտակելու	Քրիստոնե-ժողովրդական վերածնունդ կուտակելու	«Օրինաց երկիր» կուտակելու
Կուտակելու տեսանկյունից որո՞նք են երկրում ՓՄՃ ոլորտի զարգացման հիմնական խոչընդոտները				
ձեռնարկության հիմնադրման կարգը				
սեփականատիրական իրավունքը պաշտպանված չլինելը				
հարկային բեռը, բարդ հարկային համակարգը				
լիցենզիավորման կարգը				
կոռուպցիան պետական հատվածում				
վարկերի դժվար մատչելիությունը				
անբավարար պետական աջակցությունը				
օրենսդրության հաճախակի և անհետևորակ փոփոխությունները				
դատաիրավական համակարգի անկատարությունը				
վարչարարական չարաչափումները				
Պետական աջակցության ո՞ր ուղղություններն է չեն կուտակելու համարում առավել կարևոր ՓՄՃ ոլորտի բարեփոխումների իրականացման տեսանկյունից				
օրենսդրական և վարչարարական բարեփոխումների իրականացում հարկային, մաքսային, ֆինանսավարկային և այլ ոլորտներում				
արդար ժրգակցային դաշտի սպառնալուծ				
կոռուպցիայի դեմ պայքար				
իննովացիոն բաղաբանության մշակում և իրականացում				
ներդրումային բաղաբանության խթանում				
տարածքային ենթակառուցվածքների զարգացում				

1 9 1 8 6 6 4 4 / 1 9 1 8 6 6 4 4

1 9 1 8 6 6 4 4

Նուսակցության անվանումը	Ազգային ժողովրդավարական կուսակցություն	Ազգային համաձայնություն կուսակցություն	Ազգային միաբանություն կուսակցություն	«Բարգավաճ Հայաստան» կուսակցություն	Դաշինք կուսակցություն
Պատրաստ է արդյոք կուսակցությունը ՓՄՉ ոլորտի զարգացման ոլորտում համագործակցել քաղաքացիական հասարակության կառույցների՝ մասնավորապես, Փոքր և միջին բիզնեսի հիմնադրամի հետ	Այո	Այո	Այո	Որոշակի պայմանով	Այո
Առաջարկություններ կամ դիտողություններ			ՓՄՉ-ների զարգացման և ընդլայնման ուղղությամբ շատ կարևոր է այդ ուղղությամբ զարգացած երկրների փորձի ուսումնասիրությունը և տեղայնացումը: Նպաստավոր վարկերի տրամադրումը: ՓՄՉ-երում ներգրավված մասնագետների նկատմամբ նույն տեղիական և իրավական իրավունքների տարածումը, ինչ-որ պետական և քաղ. ծառայողների:		

Նուսակցության անվանումը	Ժառանգություն կուսակցություն	Ժողովրդական կուսակցություն	«Իմպիչմենտ» նախընտրական դաշինք		«Ժողովրդավարական ուղի» կուսակցություն
			Ժողովրդական հայրենիք կուսակցություն	Պահպանողական կուսակցություն	
Պատրաստ է արդյոք կուսակցությունը ՓՄՉ ոլորտի զարգացման ոլորտում համագործակցել քաղաքացիական հասարակության կառույցների՝ մասնավորապես, Փոքր և միջին բիզնեսի հիմնադրամի հետ	Որոշակի պայմանով	Այո	Այո	Պահպանողական կուսակցություն	Այո
Առաջարկություններ կամ դիտողություններ			6-րդ կետի վերաբերյալ, առաջիկա ընտրություններում մասնակցության խնդիրը և նախընտրական ծրագրերի ներկայացնելը կախված է նրանից, թե կկարողանա՞նք փոփոխել մթնոլորտը Հայաստանում՝ նախընտրական գործընթացները տեղափոխելով քաղաքական հարթություն, ինչին ամեն կերպ խոչընդոտում է գործող ռեժիմը: Միայն իրական քաղաքական ընտրությունների պայմաններում «ԺՀ» կուսակցությունը կմասնակցի ԱԺ ընտրություններին՝ ներկայացնելով իր նախընտրական ծրագիրը:	Հանդիմանում ենք, որ այս ոլորտի բոլոր դժվարություններն առաջին հերթին կապված են իշխանական համակարգի անկատարության և մեր պետության տեսակի հետ: Անհրաժեշտ են անվախ մոտեցումներ, որոնց օրինակները բազմաթիվ են քաղաքակիրթ երկրներում և վերջին հաշվով՝ գոնե մեկ անգամ ԱԶԼՏ ընտրություններ երկրում:	

Կուտակելության անվանումը	«Հայ յեղափոխական դաշնակցություն» կուտակելություն	Հայաստանի առաջադիմական կուտակելություն	Հայաստանի դեմոկրատական կուտակելություն	Հայաստանի երիտասարդական կուտակելություն
Պատրա՞տ է արդյոք կուտակելությունը ՓՄՉ ոլորտի զարգացման ոլորտում համագործակցել քաղաքացիական հասարակության կառույցների՝ մասնավորապես, Փոքր և միջին բիզնեսի հիմնադրամի հետ	վ մ ու չ ն մ ո հ ո ճ գ լ ո ս Կ ը տ ի հ մ գ ի տ ո Ղ Շ	:մնայվածությունը բարձր է և անհրաժեշտ է օգտագործել նաև այլ օրինակներում քանակական ցուցանիշներով	Այո	Այո
Առաջարկություններ կամ դիտողություններ				

Կուտակելության անվանումը	Հայաստանի ժողովրդական կուտակելություն	Հայաստանի կոմունիստական կուտակելություն	Հայաստանի հանրապետական կուտակելություն	Հայաստանի մարքսիստական կուտակելություն
Պատրա՞տ է արդյոք կուտակելությունը ՓՄՉ ոլորտի զարգացման ոլորտում համագործակցել քաղաքացիական հասարակության կառույցների՝ մասնավորապես, Փոքր և միջին բիզնեսի հիմնադրամի հետ	Այո	Այո	մնայվածությունը բարձր է և անհրաժեշտ է օգտագործել նաև այլ օրինակներում քանակական ցուցանիշներով	Այո
Առաջարկություններ կամ դիտողություններ				

Կուտակային անվանումը	Հայոց համագային շարժում կուտակային	«Հանրապետություն» կուտակային	Միավորված աշխատանքային կուտակային	Միացյալ ազատական ազգային կուտակային
Պատրաստ է արդյոք կուտակային ՓՄՁ ոլորտի զարգացման ոլորտում համագործակցել քաղաքացիական հասարակության կառույցների՝ մասնավորապես, Փոքր և միջին բիզնեսի հիմնադրամի հետ	Այո	Այո	Այո	
Առաջարկություններ կամ դիտողություններ		Հարցերն ընդհանուր են ձևակերպված՝ սահմանափակելով ավելի խորային բննարկման հնարավորությունը		Լ զ ի ն ս ճ ռ ա Վ Շ Լ զ տ տ ո տ ա Վ Խ ո Ւ Կ

Կուտակային անվանումը	«Նոր ժամանակներ» կուտակային	Սոցիալ-դեմոկրատ հնչյակ կուտակային	Քրիստոնեա-ժողովրդական վերածնունդ կուտակային	«Օրինաց երկիր» կուտակային
Պատրաստ է արդյոք կուտակային ՓՄՁ ոլորտի զարգացման ոլորտում համագործակցել քաղաքացիական հասարակության կառույցների՝ մասնավորապես, Փոքր և միջին բիզնեսի հիմնադրամի հետ	Այո	Այո		
Առաջարկություններ կամ դիտողություններ	Այս կարգի խնդիրները բննարկելիս մենք եկել ենք այն եզրակացության, որ եթե երկրում չկա քաղաքական դեմոկրատիա, ապա բնական է, որ չի կարող լինել տնտեսական դեմոկրատիա		Լ զ ի ն ս ճ ռ ա Վ Շ Լ զ տ տ ո տ ա Վ Խ ո Ւ Կ	Լ զ ի ն ս ճ ռ ա Վ Շ Լ զ տ տ ո տ ա Վ Խ ո Ւ Կ

Հավելված

Հարգելի պարոն/տիկին

«Փոքր և միջին բիզնեսի հիմնադրամ» (ՓՄԲՀ) ոչ առևտրային, ոչ կառավարական կազմակերպությունը կարևորելով մեր երկրում ՓՄՁ ոլորտի զարգացմանն ուղղված բարեփոխումների հետևողական իրականացման անհրաժեշտությունը, մտադիր է հարցման միջոցով բացահայտել ԱԺ ընտրություններին մասնակցող քաղաքական կուսակցությունների դիրքորոշումը վերոհիշյալ խնդրի վերաբերյալ և գնահատել այդ ուղղությամբ հետագա համագործակցության հնարավորությունը:

1. Կարևորում է արդյո՞ք կուսակցությունը ՓՄՁ ոլորտի դերը երկրի տնտեսական և սոցիալական զարգացման գործում:

- այո ոչ մասամբ

2. Կուսակցության տեսանկյունից հատկապես ո՞ր խնդիրների լուծման մեջ առավել կարևոր դեր ունի ՓՄՁ ոլորտի զարգացումը:

- տնտեսական աճ
- նոր աշխատատեղերի ստեղծում
- տարածքային զարգացում
- աղքատության կրճատում

3. Կուսակցության անդամների շարքում կան արդյո՞ք ՓՄՁ ներկայացուցիչներ, եթե այո, ապա ի՞նչ տոկոսային հարաբերակցությամբ:

- այո, մինչև 10%, 10% - 50%, 50%-ից ավելի
- ոչ տեղյակ չեմ

4. Կուսակցության ծրագրային հիմնադրույթների մեջ ներառվա՞ծ է արդյոք երկրում ՓՄՁ զարգացման խնդիրը:

- այո ոչ մասամբ

5. Կուսակցությունն ունի՞ր արդյոք ՓՄՁ ոլորտի զարգացման ամբողջական հայեցակարգ կամ դիրքորոշում:

- այո ոչ անորոշ է

6. Մտադիր է կամ ներառե՞լ է արդյոք կուսակցությունը ՓՄՁ ոլորտի աջակցության խնդիրը իր նախընտրական ծրագրում:

- այո ոչ անորոշ է

7. Գնահատե՞ք երկրում ՓՄՁ ոլորտի զարգացման աստիճանը:

- բավարար է բավարար չէ տեղյակ չեմ

8. Ինչպես կգնահատե՞ք երկրում ՓՄՁ ոլորտում բարեփոխումների իրականացման անհրաժեշտությունը:

- խիստ անհրաժեշտ է անհրաժեշտ է անհրաժեշտ չէ

9. Կուսակցության տեսանկյունից որո՞նք են երկրում ՓՄՁ ոլորտի զարգացման հիմնական խոչընդոտները:

- ձեռնարկության հիմնադրման կարգը
- սեփականատիրական իրավունքը պաշտպանված չլինելը
- հարկային բեռը, բարդ հարկային համակարգը
- լիցենզիավորման կարգը
- կոռուպցիան պետական հատվածում
- վարկերի դժվար մատչելիությունը
- անբավարար պետական աջակցությունը
- օրենսդրության հաճախակի և անհետևողական փոփոխությունները
- դատաիրավական համակարգի անկատարությունը
- վարչարարական չարաշահումները

10. Պետական աջակցության ո՞ր ուղղություններն է Ձեր կուսակցությունը համարում առավել կարևոր ՓՄՁ ոլորտի բարեփոխումների իրականացման տեսանկյունից:

- օրենսդրական և վարչարարական բարեփոխումների իրականացում հարկային, մաքսային, ֆինանսավարկային և այլ ոլորտներում

- արդար մրցակցային դաշտի ապահովում
- կոռուպցիայի դեմ պայքար
- իննովացիոն քաղաքականության մծակում և իրականացում
- ներդրումային քաղաքականության խթանում
- տարածքային ենթակառուցվածքների զարգացում

11. Պատրաստ է արդյոք կուսակցությունը ՓՄՁ ոլորտի զարգացմանն ոլորտում համագործակցել քաղաքացիական հասարակության կառույցների՝ մասնավորապես, Փոքր և միջին բիզնեսի հիմնադրամի հետ:

- այո ոչ որոշակի պայմանով՝

12. Այլ առաջարկություններ կամ դիտողություններ՝

ՓՄԲ-ն պատրաստ է քննարկել խնդրին վերաբերող ցանկացած այլ առաջարկություն:

Շնորհակալություն համագործակցության համար

ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԲԻԶՆԵՍԻ ՀԻՄՆԱԴՐԱՄ
 ՀՀ, ք.Երևան 010,
 Տիգրան Մեծի - 4

Հեռ./ֆաքս: (374 10) 56 24 00
 Էլ. փոստ: inbox@fsmb.am
 Էլ.կայք: www.fsmb.am